



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

13.12.2017թ.

Նիստին մասնակցում էին՝ Ս. Գապոյանը, Ա. Զանգեզուրյանը, Ա. Հովեյանը,
Գ. Դաշտոյանը, Մ. Մարինոյանը, Դ. Մազմանյանը, Ս. Ամիրխանյանը, Վ. Հակոբյանը,
Վ. Ավետիսյանը, Գ. Ղարիբյանը
Նիստը վարող՝ քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյան
Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Գավառ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
3. Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Գավառ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակների, հաստիքացուցակների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
5. Գավառ համայնքի 2018թ. բյուջեի նախագծի քննարկման և հաստատման մասին:
6. Համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակի և դրանով զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
7. Համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակի և դրանով զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
8. „Վարդգես Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան” պետական ոչ առևտրային կազմակերպությանը տարածք տրամադրելու մասին:
9. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարների հաշվարկման և գանձման կարգը հաստատելու, աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները „Գավառի կոմունալ սպասարկում և բարեկարգում” ՀՈԱԿ-ին վերապահելու մասին:
10. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 150մմ և 500մմ տրամագծերով խողովակները օտարելու նպատակով աճուրդ հայտարարելու մասին:
11. Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:
12. 2017թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
13. Դրամական օգնություն տրամադրելու մասին:
14. Համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոն ստեղծելու նպատակով տարածք տրամադրելու մասին:

Հարց 1.

ՈՐՈՇՈՒՄ 46. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/գեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18), 38-րդ հոդվածի 1-ին մասի 2) կետերի, „Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Սահմանել 2018թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույթաչափերը

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԱՅԴ ԹՎՈՒՄ	ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ	ՍՀՄԱՆՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ
1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման)(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար		
Հիմնական շենքերի և շինությունների համար՝		
1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ	15000	4500
2) սույն կետի 1) ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝		
ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ	30000	9000
բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ	50000	15000
գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ	50000	15000
դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ	100000	30000
3) Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝		
ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ	3000	900
բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ	5000	1500
2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ ՀՀ		

օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանվա2 կարողով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝		
1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գոծառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ	3000	900
2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վեևակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գոծառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մասի ավելացման կամ շենքերի գոծառական նշանակության փոփոխության մասով		
3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակոռույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գոծառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ն կետով սահմանված նորմերը		
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբեկտների քանդման (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ	5000	1500
4. ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար 100000 դրամ	100000	100000
5. ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբեկտներում տեխնիկական հեղուկներ վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար 20000 դրամ	20000	20000
6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար 50000 դրամ	50000	50000
7. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքների և (կամ) ծախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝		
1) ոգելից և ալկահոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝		
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև	0-10001	1000

10001 դրամ		
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001 դրամից մինչև 13001 դրամ	10001-13001	10001
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13001 դրամից մինչև 20001 դրամ	13001-20001	13001
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20001 դրամից մինչև 25001 դրամ	20001-25001	20001
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25001 դրամից մինչև 45001 դրամ	25001-45001	25001
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45001 դրամից մինչև 100001 դրամ	45001-100001	45001
2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝		
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10001 դրամ	0-10001	1500
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001 դրամից մինչև 13001 դրամ	10001-13001	10001
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13001 դրամից մինչև 20001 դրամ	13001-20001	13001
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20001 դրամից մինչև 25001 դրամ	20001-25001	20001
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25001 դրամից մինչև 45001 դրամ	25001-45001	25001
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45001 դրամից մինչև 100001 դրամ	45001-100001	45001
8. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում „Առևտրի և ծառայությունների մասին,, ՀՀ օրենքով սահմանված բացթողյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար	350	350
9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու		

թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար		
1) առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ	5000-50000	5000
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ	25000-100000	25000
3) բաղնիքների (սաունաներին) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ	200000-500000	200000
4) խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ	500000-1000000	500000
5) շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ	250000-500000	250000
6) վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ	100000-150000	100000
10. Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝		
1) հիմնական շինությունների ներսում		
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 5001 դրամ	0-5001	2500
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5001 դրամից մինչև 10001 դրամ	5001-10001	5001
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10001 դրամից մինչև 15001 դրամ	10001-15001	10001
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15001 դրամից մինչև 20001 դրամ	15001-20001	15001
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20001 դրամից մինչև 30001 դրամ	20001-30001	20001
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30001 դրամից մինչև 50001 դրամ	30001-50001	30001
2) ոչ հիմնական շինությունների ներսում		
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 1001 դրամ	0-1001	1000
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1001 դրամից մինչև 2001 դրամ	1001-2001	1001
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2001 դրամից մինչև 4001 դրամ	2001-4001	2001
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4001 դրամից մինչև 8001 դրամ	4001-8001	4001
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8001 դրամից մինչև 15001 դրամ	8001-15001	8001

գ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15001 դրամից մինչև 25001 դրամ	15001-25001	15001
11. Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երեվան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝		
1) ավահողային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ	2000	2000
2) թունդ ավահողային (սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ	3500	3500
3) սոցիալական գովազդի համար զրո դրամ	0	0
4) այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ	1500	1500
5) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 տոկոսի չափով	375	375
6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 տոկոսի չափով	150	150
12. ՀՀ համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ	100000	100000
13. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ	10000	10000

Ծանոթություն. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը որպես ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդկրկված բարձր լեռնային համայնք՝ հաշվարկվել են 0.3 գործակցի կիրառմամբ

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ	ԴՐՈՒՅՔԱԶԱՓ
1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	2000
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և	

շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	2000
3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	2000
4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	2000
5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	Մեկնարկային գնի 1%-ի չափով, ոչ պակաս 2000 դրամից
6. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճար համայնքի ավագանու կողմից սահմանվում է „Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում	Բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների կենցաղային աղբի համար յուրաքանչյուր բնակչի հաշվով ամսեկան 150 ՀՀ դրամ
7. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է „Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում: Սույն կետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածն որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում տեխնիկական աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով	1) ըստ ծավալի՝ 1մ ³ աղբի համար՝ 2000 ՀՀ դրամ 2) ըստ զանգվածի՝ 1տ աղբի համար՝ 6000 ՀՀ դրամ
1) Առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝	1քմ համար 25 ՀՀ դրամ, բայց ոչ պակաս 1000 ՀՀ դրամից
2) Հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝	1քմ համար 10 ՀՀ դրամ
3) Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝	1քմ համար 4 ՀՀ դրամ
4) Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝	1քմ համար 2 ՀՀ դրամ
8. Համայնքային ենթակառուցվածքային մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով	1 սանի համար՝ ամսեկան 4000 ՀՀ դրամ

9. Համյնքային ենթակայության արտադարձական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով	Յուրաքանչյուր անձի համար ամսեկան 1) „Գավառի մարզադպրոց,, ՀՈԱԿ - 2000 ՀՀ դրամ 2) „Գավառի ուսուցողական կենտրոն ՀՈԱԿ ա. հեյրունագործության խմբակ – 1500 ՀՀ դրամ բ. Մնացած խմբակների համար -2000 ՀՀ դրամ 3) „Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն,, ՀՈԱԿ ա. մակրամեի և ձեռարվեստի խմբակներ – 1500 ՀՀ դրամ բ. Մնացած խմբակների համար -2000 ՀՀ դրամ 4) „Գավառի երաժշտական դպրոց,, ՀՈԱԿ-2500 ՀՀ դրամ 5) „Գավառի արվեստի դպրոց,, ՀՈԱԿ ա. թատերական և գեղարվեստի բաժիններ – 2000 ՀՀ դրամ բ. Մնացած բաժինների համար -2500 ՀՀ դրամ 6) „Գավառի՝ Գևորգ Դաբաղյանի անվան դուդուկի մասնագիտացված երաժշտական դպրոց,, ՀՈԱԿ - 3000 ՀՀ դրամ
---	---

Կողմ՝ (10)	Դեմ ՝ (0)	Ձեռնապահ՝ (0)
ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ		
ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ		
ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ		
ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ		
ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ		
ՍՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ		
ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ		
ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ		
ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ		
ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ		

ՀԱՐՑ 2.

ՈՐՈՇՈՒՄ 47. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/գեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Վ. Հակոբյանը, Մ. Մարինոսյանը

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11), 28-րդ հոդվածի 4) կետերի դրույթներով և հաշվի առնելով Գավառ համայնքի մշտական բնակչության թիվը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ /29091 մարդ/, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Գավառ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել ՀՀ ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի 40.1 տոկոսի չափով՝ 265200 /երկու հարյուր վաթսուն հինգ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

Կողմ՝ (10)

Դեմ՝ (0)

Ձեռնապահ՝ (0)

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻՔՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՄԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈՔՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 3.

ՈՐՈՇՈՒՄ 48. ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Գ. Դաշտոյանը

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28), 34-րդ հոդվածի 3-րդ մասի 4) և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7) կետերի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի
2. Հաստատել Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի

Հավելված N 1

Գավառ քաղաքային համայնքի ավագանու

2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 7 նիստի 48 որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Իրավատնտեսագիտական բաժին
2. Ներքին աուդիտի բաժին

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գավառի տարածքային բաժին

Հավելված N

2

Գավառ քաղաքային համայնքի ավագանու

2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 7 նիստի 48 որոշման

ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՈՐՈՒՄ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 37 աշխատակից
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶՔԸ
1	ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	1	212100
2	ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ	1	100000
3	ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ	1	100000
4	ՄԱՍԼՈ ՔԱՐՏՈՒՂԱՐ	1	72752
5	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ	1	188000
ԻՐԱՎԱՏՆԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ			
6	ԲԱԺՆԻ ՊԵՏ	1	130000
7	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
8	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
9	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
10	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԲԱԺԻՆ			
11	ԲԱԺՆԻ ՊԵՏ	1	130000
12	ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	87000
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			
13	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
14	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
15	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
16	ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	87000
17	ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	87000
18	ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	87000
ՏԵԽՆՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
19	ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ	2	80000
20	ՕՊԵՐԱՏՈՐ	2	72752
21	ԳՈՐԾԱՎԱՐ	1	75000

22	ՏՆՏԵՍՎԱՐ	1	72752
23	ՎԱՐՈՐԴ	2	75000
24	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	72752
25	ՑՐԻԶ	1	72752
26	ՊԱՀԱԿ	5	72752
27	ԸՆԴԱՄԵՆԸ	34	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ			
	ԲԱԺՆԻ ՊԵՏ	1	284000
	1-Ն ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ	2	136000

Ծանոթություն.

1. Ղեկավարվելով „ Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի իրավատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-14/ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանել հավելվածար՝ ամսեկան 32000 ՀՀ դրամի չափով:
2. 1974 թ. հետո ծնված՝ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների դրույքաչափը սահմանել 77904 ՀՀ դրամ:

Կողմ՝ (10)

Դեմ՝ (0)

Ձեռնապահ՝ (0)

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒԹՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 4.

ՈՐՈՇՈՒՄ 49. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՑԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/գեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Զանգեզուրյանը, Ա. Հովեյանը

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28) և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7) կետերի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Գավառ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը:

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱԶՍՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՀԱՇՎԱՊԱՀ-ԳՈՐԾԱՎԱՐ	1	1	72752
3	ՂԱՍՏԻԱՐԱԿ	3	3	72752
4	ԲՈՒԺՔՈՒՅՐ	1	1	72752
5	ԵՐԱԺԻՇՏ	0.75	1	72752
6	ՂԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ	3	3	72752
7	ԽՈՀԱՐԱՐ	1	1	72752
8	ՊԱՀԱԿ	1	1	72752
9	ՏՆՏԵՍՎԱՐ	0,5	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	12.25	13	

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱԶՍՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	72752
3	ՂԱՍՏԻԱՐԱԿ	4	5	72752
4	ԲՈՒԺՔՈՒՅՐ	1	1	72752
5	ԵՐԱԺԻՇՏ	1	1	72752
6	ՂԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ	4	4	72752
7	ԽՈՀԱՐԱՐ	1	1	72752
8	ԽՈՀԱՐԱՐԻ ՕԳՆ.	1	1	72752
9	ՊԱՀԱԿ	1	1	72752
10	ՏՆՏԵՍՎԱՐ	0,5	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	15.5	17	

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱԶՍՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՀԱՇՎԱՊԱՀ-ԳՈՐԾԱՎԱՐ	1	1	72752

3	ՂԱՍՏԻԱՐԱԿ	2	2	72752
4	ԲՈՒԺՔՈՒՅՐ	0.5	1	72752
5	ԵՐԱԺԻՇՏ	0.5	1	72752
6	ՂԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ	2	2	72752
7	ԽՈՂԱՐԱՐ	1	1	72752
8	ՊԱՅԱԿ	1	1	72752
9	ՏՆՏԵՍՎԱՐ	0,5	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	9.5	11	

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	72752
3	ՏՆՕՐ. ՏԵՂ-ՄԵԹՈՂԻՍՏ	0.5	1	72752
4	ՂԱՍՏԻԱՐԱԿ	4	4	72752
5	ԲՈՒԺՔՈՒՅՐ	1	1	72752
6	ԵՐԱԺԻՇՏ	1	1	72752
7	ՂԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ	4	4	72752
8	ԽՈՂԱՐԱՐ	1	1	72752
9	ՏՆՏԵՍՎԱՐ	0,5	1	72752
10	ՊԱՅԱԿ	1	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	15	16	

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՀԱՇՎԱՊԱՀ-ԳՈՐԾԱՎԱՐ	1	1	72752
3	ՂԱՍՏԻԱՐԱԿ	3	3	72752
4	ԲՈՒԺՔՈՒՅՐ	1	1	72752
5	ԵՐԱԺԻՇՏ	0.75	1	72752

6	ԴԱՍՏԻԱՐԱՎԿԻ ՕԳՆԱԿԱՆ	3	3	72752
7	ԽՈՂԱՐԱՐ	1	1	72752
8	ՏՆՏԵՍՎԱՐ	0,5	1	72752
9	ՊԱՀԱԿ	1	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	12.25	13	

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ՀՈՍԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՏՆՕՐԵՆԻ ՕԳՆ	1	1	72752
3	ՄԵԹՈԴԻՍՏ	1	1	72752
4	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	72752
5	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
6	ՀԱՎԱՔԱՐԱՐ	1	1	72752
7	ՊԱՀԱԿ	1	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	7	7	

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈՍԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅ ՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	72752
3	ՄԱՏԵՆ ԱԳԵՏ	2	2	72752
4	ԱՌԱՋԱՏԱՐ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ	3	3	72752
5	ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՆԵՐ	6	6	72752
6	ՕՊԵՐԱՏՈՐ	1	1	72752
7	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	2	72752
8	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
9	ՊԱՀԱԿ	1	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	18	18	

ՈՒՍՈՒՅՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՈՍԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ	1	1	72752
3	ՄԵԹՈԴԻՍՏ	1	1	72752
4	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	72752

5	ՊԱՅԱԿ	1	1	72752
6	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
7	ՀԱՎԱՔԱՐԱՐ	1	1	72752
8	ԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐ	138 ժամ 5.75 դրույք	8	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	12.75	15	

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՍԵԹՈՂԻՍ	1	1	72752
3	ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ	1	1	72752
4	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	72752
5	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
6	ՀԱՎԱՔԱՐԱՐ	1	1	72752
7	ԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐ	138 ժամ 5.75 դրույք	6	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	11.5	12	

ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	112000
2	ՈՒՍՍԱՍՎԱՐ	1	1	72752
3	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	82000
4	ԲՈՒԺՔՈՒՅՐ	1	1	72752
5	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
6	ԳՈՐԾԱՎԱՐ	1	1	72752
7	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	2	72752
8	ԴՈՆԱՊԱՀ	1	1	72752
9	ՊԱՅԱԿ, ՀՆՈՑԱՊԱՀ	1,5	1	72752
10	ՀԱՆԴԵՐՉԱՊԱՀ	1	1	72752
11	ՄԱՐԶԻՉՆԵՐ	332 ժամ 13.5 դրույք	10	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	25	21	

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	112000

2	ՈՒՍՄԱՍՎԱՐ	1	1	72752
3	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	82000
4	ԳՈՐԾԱՎԱՐ	1	1	72752
5	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
6	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	2	72752
7	ՊԱՀԱԿ	1	1	72752
8	ԴԱՍՍԱՏՈՒ	427 ժամ 17.8 դրույք	23	89000
	ԸՆԴԱՄԵՆԸ	25.8	31	

ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱԶԱԾԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	112000
2	ՈՒՍՄԱՍՎԱՐ	1	1	72752
3	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	82000
4	ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ	1	1	72752
5	ԳՈՐԾԱՎԱՐ	1	1	72752
6	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	2	72752
7	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
8	ՀԱՆԴԵՐՉԱՊԱՀ	1	1	72752
9	ՊԱՀԱԿ	2	2	72752
10	ԴԱՍՍԱՏՈՒ	503 ժամ 21 դրույք	25	89000
	ԸՆԴԱՄԵՆԸ	32	36	

**„ԳԱՎԱՌԻ՝ Գ. ԴԱԲԱՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ՝ ԴՈՒԴՈՒԿԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ԴՊՐՈՑ” ՀՈԱԿ**

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱԶԱԾԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ԽՈՐՀՐԴԱԿԱՆ	1	1	72752
3	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	72752
4	ԳՈՐԾԱՎԱՐ	1	1	72752
5	ԴԱՍՍԱՏՈՒ	83 ժամ 3.5 դրույք	4	89000
	ԸՆԴԱՄԵՆԸ	7.5	8	

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	203000
2	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	105000
3	ՕՊԵՐԱՏՈՐ	1	1	99000
4	ՄԵԽԱՆԻԿ	1	1	78000
5	ԲԱՆՎՈՐ	8	8	111000
6	ՎԱՐՈՐԴ	8	8	111000
7	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	2	73000
	ԸՆԴԱՄԵՆԸ	22	22	
	ՀՍԿԻՉ ՇՐՋԱԳԱՅՈՂ		3	

Հսկիչ շրջագայողների ամսեկան աշխատավարձի չափը սահմանել տվյալ ամսվա ընթացքում ֆիզիկական անձանցից հավաքագրված վարձավճարի գումարի 32 տոկոսի չափով:

Ծանոթություն .

1. 1974 թ. հետո ծնված՝ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների դրույքաչափը սահմանել 77904 ՀՀ դրամ:
2. „Արվեստի դպրոց” և „Մարգարապրոց” ՀՈԱԿ-ների հանրապետության այլ բնակավայրերից ժամանող դասատուներին վճարել հավելավճար՝ որպես ճանապարհածախսի փոխհատուցում՝ յուրաքանչյուր հաճախած օրվա համար 2000 ՀՀ դրամ:

Կողմ՝ (10)

Դեմ՝ (0)

Ձեռնապահ՝ (0)

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 5.

ՈՐՈՇՈՒՄ 50. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/գեկ. Տ. Բրսիկյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5) , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետերի և , «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

- Հաստատել Գավառ համայնքի 2018թ. բյուջեի նախագիծը
 - եկամուտների գծով՝ 573798.2 հազար դրամ, որից

սեփական եկամուտներ 224484.4 հազար դրամ

բ) ծախսերի գծով՝ 573798.2 հազար դրամ
- Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի
- Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի
- Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի
- Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը կազմում է 55000.0 հազ. դրամ
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
ա) թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15 % չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև

բ) սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների գումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 5 %-ը:

Ֆինանսական միջոցների կանխատեսում

2018 թվականի բյուջեի եկամուտների կանխատեսման համար հիմք են հանդիսացել նախորդ տարիների մուտքերի կատարման վերլուծությունը բյուջետային տարվա հարկային հաշվարկային եկամուտները: Վերլուծվել և հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում բյուջետային ծախսերի ու մուտքերի շարժը և դրանց վրա ազդող օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները: Կանխատեսման ժամանակ հաշվի է առնվել ազգաբնակչության սոցիալական և տնտեսական, ինչպես նաև ձեռնարկատիրական ու արտադրական ոլորտների իրական դրությունը առավել իրատեսական բյուջե կազմելու համար:

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

/ հազար դրամ /									
No	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2016 թ. փաստ	2017 թ. հաստատված	2018 թ կանխատեսում	2017թ. 2016թ. նկատ %	2018թ. 2017թ. նկատ %	Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ %		
							2016 թ	2017 թ	2018 թ
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	489000,1	536055,2	573798,2	109,6	107,0	100,0	100,0	100,0
1	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	73689,4	86326,8	125580,1	117,1	145,5	15,1	16,1	21,9
1,1	Հողի հարկ	8079,2	15121,3	19526,9	187,2	129,1	1,7	2,8	3,4
1,2	Գույքահարկ	65610,2	71205,5	106053,2	108,5	148,9	13,4	13,3	18,5
2	ՏՈՒՐՔԵՐ	8474,4	13098,2	14433,2	154,6	110,2	1,7	2,4	2,5
2,1	Պետական տուրքեր	6315,1	7000,0	8500,0	110,8	121,4	1,3	1,3	1,5
2,2	Տեղական տուրքեր	2159,3	6098,2	5933,2	282,4	97,3	0,4	1,1	1,0
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	47616,9	88281,5	92056,3	185,4	104,3	9,7	16,5	16,0
3,1	Գույքի և հողի վարձակա լության վճարներ	13738,2	20118,7	16951,0	146,4	84,3	2,8	3,8	3,0
3,2	Վարչական իրավախախտումներից եկամուտներ	0,0	59,0	142,1	0,0	0,0	0,0	0,0	0,0
3,3	Տեղական	21219,9	57668,6	65828,0	271,8	114,1	4,3	10,8	11,5

	վճարներ								
3,4	Պատվիրակված լիազ. ֆինանս.մուտքեր	7591,1	7585,2	7585,2	99,9	100,0	1,6	1,4	1,3
3,5	Համայնքի վ/տ ինքնական շին. օրինականացման վճար	3356,8	1500,0	1500,0	44,7	100,0	0,7	0,3	0,3
3,6	Այլ ոչ հարկային եկամուտներ	1710,9	1350,0	50,0	78,9	3,7	0,3	0,3	0,0
3,7	Վարչ. բյուջեի պահուստային ֆոնդ. ֆոնդային բյուջե հատկացում	37811,9	55000,0	55000,0	145,5	100,0	7,7	10,3	9,6
4	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-19871,3	-45497,3	-16705,7	0,0	0,0	-4,1	-8,5	-2,9
4,1	Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից մուտքեր	-19871,3	-45497,3	-16705,7	0,0	0,0	-4,1	-8,5	-2,9
5	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՉՆԵՐ	334843,0	348348,7	341728,6	104,0	98,1	68,5	65,0	59,6
5,1	Դոտացիա	327730,1	339813,2	333193,1	103,7	98,1	67,0	63,4	58,1
5,2	Սուբվենցիա	7112,9	8535,5	8535,5	120,0	100,0	1,5	1,6	1,5
5,3	Այլ դոտացիա	24376,4	0,0	0,0	0,0	0,0	33,1	0,0	0,0

Հողի հարկ

Վերջին տարիների տվյալները ցույց են տալիս, որ հողը հարկի վճարումների ցածր մակարդակը ազգաբնակչության և իրավաբանական անձանց անվճարումնականության, սեփականաշնորհված հողերից հրաժարվելու`որը ունի շարունակական տեմդեց, հողի սեփականատերերի մի մասի համայնքից բացակայելու հետևանքն է:

Գավառ համայնքում ընդհանուր առմամբ շատ ցածր է հողօգտագործման արդյունավետությունը: Գյուղատնտեսական կուլտուրաների ցածր բերքատվությունը և ծախսերի բարձր լինելը հողօգտագործողներին չի տրամադրում հողերը մշակելուն, կատարել լրացուցիչ ներդրումներ ընդհանրապես կապվել գյուղատնտեսության հետ:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները, հողի հարկի գծով մուտքերը 2018թ համար կանխատեսվում է 19526.9 հազար դրամ, որից 14526.9 հազար դրամը ճշգրտված հաշվարկային ցուցանիշն է, իսկ 5000.0 հազար դրամը ներառված ապառք:

Գույքահարկ

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտը սեփականության իրավունքով պատկանող շինություններն ու փոխադրամիջոցներն են:

Նշված տարիների վերլուծությունը ցույց է տալիս, որ ազգաբնակչության ներկա սոցիալ տնտեսական իրավիճակը չի նպաստում գույքահարկի գանձման բարձր մակարդակի ապահովմանը:

Հաշվի առնելով նշված հանգամանքները գույքահարկի գծով մուտքերը 2018թ համար կանխատեսվում է 106053.2 հազար դրամ, որից 71173.7 հազար դրամը ճշգրտված հաշվարկային ցուցանիշն է, իսկ 34879.5 հազար դրամը ներառված ապառք:

Այդ թվում

շենքերից և շինություններից`

22389.6 հազար դրամ

փոխադրամիջոցներից`

83663.6 հազար դրամ

Պետական տուրքեր

Պետական տուրքերի գծով պլանավորելիս հաշվի է առնվել նախորդ տարիների փաստացի մակարդակները: 2018թ բյուջեյում պետտուրքի գումարը նախատեսվում է 8500.0 հազար դրամ, որից նոտարական ծառայության գծով 4500.0 հազար դրամ, ՔԿԱԳ -ի գծով՝ 4000.0 հազար դրամ:

Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով համապատասխան թույլտվությունների համար սահմանված տուրքերից 2018թ բյուջեի մուտքերը պլանավորել 5933.2 հազար դրամ:

Հողի և գույքի վարձակալություն

Այստեղ հաշվի են առնվում համայնքի սեփականություն համարվող գույքերը և հողերը վարձակալությամբ տալու հնարավորությունը:

2018թ. ի համար գույքերի և հողերի վարձակալությունից մուտքեր նախատեսվում է 16951.0 հազար դրամ որից՝

